ւոր մասերը, բայց դա ժամանակաւոր երևոյթ է։ Փարիզն էլ պաշարուեց, Վարշաւայի անկումն էլ մօտալուտ էր. սակայն, շնորհիւ ժողովրդի զգաստ ոգու և դիտակից հայրենասիրութեան՝ պատերազմի ընթացքը բոլորովին այլ կերպարանք ստացաւ, և մայրաքաղաքներին սպառնացող թշնամին հարկադրուեց հաշտութիւն խնդրել։

Գիտակցական ոգևորութիւնն ու զգաստութիւնը հետևանք է եռանդուն աշխատանքի և ես կարծում եմ, որ այդ աշխատանքը մեր ժողովրդի համար ուշացած չէ։ Ինձ չի սարսափեցնում Կարսի անկումը, ինձ սարսափեցնում է ժողովրդական խաւերի մէջ նկատուող անտարբեր վերաբերմունքը. վերացնել այդ՝ մեր առաջին պարտքը պիտի լինի, լարուած աշխատանքի միջոցով զգաստացնել մեր հասարակութիւնը՝ կարևորագոյն խնդիրներից մէկը։ Դրա հետ մէկտեղ հասարակութիւնը պէտք է հնարաւոր վիճակի մէջ պահէ պետական ապարատը. չմոռանանք, որ յաճախ պատերազմի անյաջողութեան պատճառ են դառնում շատ հասարակ պակասներ։

Եթէ մենք հասնենք ժողովրդի զգաստացման փաստին ու այդպիսով պատերազմի մէջ նրա դիտակցական մասնակցութիւնը օգտագործենք, եթէ կառավարութիւնը բոլոր միջոցներով կարգաւորէ պետական ապարատն ու թիկունքի կազմակերպութիւնը խելացի հիմքերի վրա դնէ, ապա յաղթանակը աներկբայելի է։ Ողջունելով կառավարութեան ընթացքը՝ ես հայ ժողովրդին ոգևորութեան և զգաստացման կոչ եմ անում (ծափահարութիւն)։

Ա. Խոնդկարեան (սոց.-յեղ.). — Նախարարապետի զեկուցումից յետոյ մենք կարող ենք ասել, որ մեզ համար այդ ամենը անսպասելի չէր. չկայ թշնամիներից ոչ նենգը, ոչ խորամանկը, ոչ ջենտլմենը, թշնամին թշնամի է, իսկ յաղթող թշնամին միշտ թելադրում է իր կամքը։ Տաճիկները յաղթել են և այժմ ուզում են իրենց թաթը դնել Հայաստանի վրա. ի պատասխան դրա էսէրական ֆրակցիայի կողմից մի բան ունեմ ասելու — հաշուել տաճիկների պայմաններին հայ ժողովուրդը չի կարող։ Սակայն, կուի նպատակը պարզ պիտի լինի, մի բան, որ չասաց նախարարապետը. կուում ենք մեռնելո՞ւ, թէ՞ յաղթելու համար։ Հայ ժողովուրդը կուում է յաղթելու համար միայն և եթէ այդ այդպէս է, ապա այսօր մենք պէտք է խօսենք այն միջոցների մասին, որոնց գործադրումով պիտի շահենք յաղթանակը։ Պատերազմը քաղաքական օրդանիզմի լարումն է. նրան կարող է դիմանալ միայն առողջ օրդանիզմը, ահա այն դասը, որ մենք պէտք է սովորենք այս պատերազմից. Հայաստանի պետական օրդանիզմը հանդէպ հիւծուող Տաճկաստանի դուրս եկաւ թոյլ և անառողջ։ Կառավարութիւնը պարտք ունէր այստեղ թուելու յաղթութեան համար ձեռք առնուած միջոցները. այդ չարաւ նա, ուստի էսէրական ֆրակցիան իր կողմից պիտի առաջարկէ հիմնական միջոց պետական անառողջ օրդանիզմը բուժելու նախ և առաջ ու ապա, դրա միջոցով, յաղթութեան դիմելու։ Էսէրական ֆրակցիայի կարծիքով բուժման ու յաղթանակի հիմնաքարը դնելու համար անհրաժեշտ է վերակառուցել պետական մեխանիզմը սկզբից. խօսքս վերաբերում է Հայաստանի կառավարութեան։ Ցաւոտի է, թէ ինչ պայմաններում ծնունդ առաւ ներկայ կառավարութիւնը. վերացել են այդ պայմանները, սակայն, կառավարութիւնը շարունակում է դեռ գոյութիւն ունենալ. մեր հիմնական սխալներից մէկն այդ է։

Թշնամին գալիս է սպանելու ամէն մէկ հայի, ապա ուրեմն, Հայաստանը պէտք է ունենայ մի կառավարութիւն, որ կարողանայ դիմադրաւել այդ համաժողովրդական վտանգը. կառավարութիւնը պիտի լինի համաժողովրդական, համապետական։